

ԳԼՈՒԽ ԻԸ.

1 Յաղագս Յազարաւուխտոյն՝ որ էր մի ի Նախարարացն Պարսից, զոր առաքեաց Շապուհ արքայ ութսուն բիւրաւք հարկանել զերկիրն Յայոց. եթէ զիա՛րդ Վասակ ել ընդ առաջ Նորա մետասան հազարաւ, հարկաներ սատակեր զնա եւ զգաւրս Նորա ի սահմանս Աղծնեաց:

2 Եկն եհաս Յազարաւուխտ ի գաւրացն Պարսից, գալ այրեացաւեր առնել, ի հիմանց տապալել զերկիրն Յայոց: 3 Եւ դիմեալ ընդ երկիրն Աղծնեաց, կամեցաւ ծաւալել ընդ երկիրն Յայոց եւ ընդ ամենայն սահմանս Նոցա: 4 Ապա ելաներ Վասակ ընդ առաջ Նորա հանդերձ մետասան հազարաւ. հարկաներ սատակեր, եւ զգաւրսն զմնացեալսն եւ զփախստականսն արկաներ յերկիրն Պարսից. եւ զՅազարաւուխտն անդէն սպանաներ:

ԳԼՈՒԽ ԻԹ.

1 Յաղագս Դմաւունդ Վսեմականայ, որ իննսուն բիւրուն տապրիկ գաւրաւքն՝ զոր առաքեաց ի վերայ Արշակայ արքային Յայոց Շապուհ արքայն Պարսից: 2 Ապա ելաներ Վասակ գաւրավարն Յայոց, հարկաներ զնա եւ զգաւրս Նորա:

3 Ապա գայր հասաներ ի Կաւոսականի տոհմէն Դմաւունդ Վսեմական, հանդերձ իննսուն բիւրուն՝ որ առաքեալ էին ի Շապիոյ արքայէն Պարսից յերկիրն Յայոց, տալ ընդ Նոսա մարտ պատերազմի: 4 Ապա կազմեցան պատրաստեցան գաւրքն երկրին Յայոց, եւ Վասակ գաւրավար Նոցա. ելին պատերազմել ի դիմի հարկանել Նոցա: 5 Ապա ի պարտութիւն մատնեցան գաւրքն Պարսից յերեսաց Նոցա, դարձան ի փախուստ: 6 Յասաներ Վասակ, կոտորեր սպանաներ հարկաներ ի Նոցանէն, զի եւ մի ոչ ապրեցուցաներ. եւ զՎսեմականն ի մեջ գաւրացն սպանաներ¹: 7 Եւ սինլթորթն² արտաքոյ իւրեանց սահմանացն հալածեալ տանէին:

ԳԼՈՒԽ Լ.

1 Յաղագս Վահրիճայ, որ չորեքհարիւր բիւրուն գայր հասաներ, տայր պատերազմ ընդ Արշակայ արքային. եւ զիա՛րդ մատնեցաւ ի ձեռս Վասակայ գաւրավարին Յայոց ամենայն գաւրաւքն հանդերձ:

2 Ապա գայր հասաներ Վահրիճ ի Վահրիճայ, եւ գաւրքն Պարսից չորեքհարիւր բիւրուն առաքեալ ի Շապիոյ արքայէն ի վերայ Յայաստան աշխարհին, աւար առնուլ եւ կորոսանել զերկիրն գաւրացն թագաւորութեանցն Յայոց. եւ գային հասանէին ի տեղին, որ կոչին Մախագեան: 3 Ապա քառա-

1 *Օրինակ մի չունի՝* եւ զՎսեմականն... սպանաներ

2 *Ի չորս օրինակս՝* սինլթորթն: *Ի Պատկանեան օր.* զինլորթն